

և կենդրոնը, այսինքն կենդրոնական վարչութիւնը վաւերացնէ (առաջարկ նահապետ էֆ. Ռուսինեան):

Ազգային ժողովը բացարձակ առաւելութեամբ, հետը հաշուելով իւր նախագահ պատրիարք Մկրտիչ արքեպիսկոպոսի քուէն, ընդունում է, որ «սահմանադրապէս իբրեւ գաւառական առաջնորդի մը ընտրութիւն, Աղթամարայ և Սոյ վանահայր առաջնորդաց կամ վիճակաւորաց ընտրութիւնը գաւառինն է, վաւերացումն՝ կենդրոնինն է»:

Այսպէս, Ազգային ժողովը իւր Ը. նստին, լսելով իւր նախագահ պատրիարքի յայտարարութիւնը, թէ «եթէ այսօր այս երկու կաթողիկոսութեանց խնդիրը կենդրոնէն դուրս ելլէ, ընդհ. ժողովին չը արուի ընտրութեան վաւերացումն, ես կը պարտաւորիմ պատրիարքութենէ հրաժարուելու», քուէից մեծամասնութեամբ ընդունում է, որ Աղթամարայ և Սոյ վանահայր վիճակաւորաց ընտրութեան վաւերացումն Ազգային ժողովը կատարի (Հայրապ. Հայաստ. եր. 787—857):

Յուսիկ եպիսկոպոս



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ.

Մասենադարանի եւ Թանգարանի անունով ստացուած նուէրներ.

11. Երեւանից պ. Չաթալըբաշեանը ուղարկել է 8 տպագրուած հայերէն գրքեր:

12. Վաղարշապատ գիւղացի պ. Աղէքսանդր Բղնունին նուիրել է երկու հազուագիւտ ձեռագիր, մէկը՝ Կոնստանդնուպոլսի Գրիգոր Մահուեցի կաթողիկոսի գրած, միւսը Կ. Պօլսում տպրող հայերի կողմից երկրորդ անգամ Գաւիթ կաթողիկոսին տուած մանսարին, այսինքն կաթողիկոսին ընդունելութեան ժողովըրդական ստորագրութեան թուղթը: Երկրորդ թղթի նման օրինակներ պահուած կան, իսկ առաջինը հազուագիւտ է և

Էջմիածնում գրուած հնագոյն կոնդակն է: Կոնդակը, գրուած նեղ և երկար թղթի միայն մի երեսի վրայ, ուղղուած է հաստավիայ վանքում նստող առաջնորդին, որի մէջ Գրիգոր կաթուղիկոսը օրհնում է վերջինիս խնամոց յանձնուած հոգևոր հօտը, որ բնակուում է հեանեալ տեղերում:

«Չոր աւրհնութեամբն Աստուծոյ գրեմք ի սուրբ և ի հռչակաւոր յանուանի և յականաւոր վանքն, ի հախտակայն. ի տահմանեալ թէմն և ի վիճակն իւր բողոքովին. ի Խաւ քաղաք և յերկիրն իւր. ի շամբխձորն. ի յարարքն. ի ջաղացատեղն. ի ջաղա և ի յիւր վանքն. ի յառապատ և ի յիւր վանքն. ի շիրինթալն. և յայլ ամենայն թէմն և ի վիճակն իւր բողոքովին...»: Սովորական օրհնութիւնից յետոյ յայտնում է, որ մեծաւ հանդիսիւ եպիսկոպոս է ձեռնադրել ժողովրդից ընտրած և ուղարկած «աբեղայա զՄխիթարա, հռչակաւոր վանիցդ սուրբ Ստեփաննոս հախտակայիդ եպիսկոպոս և ձեզ հոգևոր առաջնորդ եղբայր և ընկեր»: Գրութեան ժամանակն է. «Գրեցաւ գիր աւրհնութեան բարձրը հրամանիս մերոյ. ի յըստ ի մեզ մարդեղութեան և ծննդեանն մարմնով Գրիստոսի Աստուծոյ մերոյ Ռ.Գ.ձեԱ: Եւ ի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ Ռ.ձեԱ: Եւ ըստ տաւմարին զմեծ թուին հայոց ՊԶԹ: Եւ ի մեր նստիլս ի սուրբ աթոռս որ է ամիսս ԺԱ և աւր Ե յունար է: Եւ վասն առաւել հառաատութեան և աւատալոյ ձեզ. ձեռադրեցաք մեր իոկ սովորական կարմիր ձեռագրով: Կընքեցաւ վերոյ ծաղկաւետ տիրական երևելի մեծ մատանեաւ՝ քահանայական և թագաւորական»: Վերջում աւելացրած է. «Գրեցաւ ձեռամբ Ստեփաննոս դպրի և դրագրի մեր»: Ստորագրութիւնն ունի իրաջ և կարմիր թանաքով. «Գրիգոր ծառայ Աստուծոյ: Շնորհաւք և ողորմութեամբ նորին կաթուղիկոս ամենայն Հայոց և պատրիարդ արևելեան և Վաղարշապատու»: Նոյն տիպոսը փոքր աւելի ընդարձակ ունի կոնդակի սկսուածքը: Կտրուած է ճակատի «քահանայական և թագաւորական» կնիքը: Այս կոնդակը անհրաժեշտ է ամբողջութեամբ տպագրել, մենք առայժմ բաւականացանք էական կէտերը քաղելով: Շնորհիւ այս կոնդակի մենք պէտք է Էջմիածնի կաթուղիկոսութեան վերահաստատութիւնը Կիրակոս Վերապետու օրով, 1441 թուից մի քանի տարի առաջ տանենք: Յայտնի է, որ մեր կաթուղիկոսները շատերը տարէթուերը սխալ են և կարօտ ստուգութեան: Որքան լաւ կլինէր, եթէ այսպիսի վաւերական թղթեր աւելի գտնուէին:

Երկրորդ թղթով, գրուած Հայոց Ռ.Մ.ԾԱ (1802) թուին Գաւիթ կաթուղիկոսին, Կ. Պօլսի հայերը, հոգևորական և աշխարհական

միացեալ «մեր ի մայրաքաղաքիս Կ. Պօլսոյ ընտկեալ համայն հայասեռ ազգ յօթար սրտիւ՝ համահաճ կամօք՝ մեծաւ հանգիսիւ հաւաքեալ ի մի վայր ի սուրբ Աստուածածին եկեղեցւոջ՝ արաբեալ ժողով և Սկւնհողոս՝ արքայամեծար պատրիարքաւ և նորին տեղապահիւ, նաև սրբոյ Էջմիածնի, սրբոյ Երուսաղէմայ, սրբոյ Կարապետի Աթոռոցն և այլ ամենայն մայրաքաղաքաց վերատեսչօք և փոխանօրդօք. ընդ որս էին՝ արքեպիսկոպոսունք, եպիսկոպոսք, ծայրագոյն վարդապետք, աւագերէցք, աթոռակալք և ամենայն դասք եկեղեցականացն՝ քահանայք, միւթէ-վէլիք, ամիրայք, եկեղեցապանք, իշխանապետք, իշխանք և պետք իւրաքանչիւր էսնաֆաց, և ամենայն լուսաւորչածին ժողովուրդ արեւելեան և արեւմտեան, հիւսիսային և հարաւային կողմանց, եկեալ վաճառականք միահաղոյն բարեսէր բաղձանօք իւրաքանչիւր ոք ըստ իւրում՝ աստիճանի մատուցանեմք զՓրկչաւանդ ողջոյն.....» յայտնում են իրենց սրտի ուրախութիւնը. որ մայր Աթոռից վերացել է խռովութիւնը, որ Դաւիթը օսմանցոց արքայի շաթաի—հիւմայինով և ազգի ընտրութեամբ վերստին հաստատուել է կաթողիկոս։ «Աւստի աչք ազգիս Հայոց ի լոյս եկիցի... Տէր Յիսուս շնորհաւորս արասցէ ի խոր խաղաղութիւն և ի հաստատութիւն պահեսցէ և ի գլխոյ մերմէ անպակաս արասցէ զՏէր Դաւիթ սրբազան կաթողիկոս ամենայն Հայոց»։

Թղթի երկարութիւնը երեք արշին մի քառորդ է, իսկ լայնութիւնը $\frac{5}{4}$ արշին։ Աւղիզ կէս արշինը գրութիւնն է բըռնում, իսկ մնացեալ մասը կտրմիր թանաքով բաժանուած է աղիւսահաձև քառանկիւններէ, որոնց մէջ վերոյիշեալ անձանց ստորագրութիւններն են ըստ դասակարգի։ Այս թուղթը պատճէնն է և ոչ ընագիր։

13. Մայր Աթոռիս միաբան Սահակ վարդապետ Ամատունին մատենադարանին նուիրեց վեց ձեռագիր, որոնցից մէկը ստացել է Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանից, մէկը Դէգէոն Ահարոնեանից և երկուսը Անդրուշ Բաբամեանից։

ա. Մանրութեամբ. Թղթեայ, բոլորագիր, փոքրագիր ձեռագիր է, բաղկացած 147 թղթից, թերի երկու ծայրերից։ Յիշատակարանն է թղ 37 «Թվ. Չկմ գրեցաւ ձեռամբ յողնայմեղ մեղադարաւ ի խնդրոյ սրբասէր քահանայի Մանուէլի զոր Տէր վայելեալ տացէ»։

բ. Աղօթագիրք և խորհրդատեք. Թղթեայ, բոլորագիր, փոքրագիր ձեռագիր է, թերի երկու ծայրից։ Մօտ 62 դարու։

գ. Սաղմոս. մագաղաթեայ, բոլորագիր, փոքրագիր, պա-

հուած է անթերի, յիշատակարան չունի. ժամանակն է մօտ ժՁ դար: Սաղմոսի վերջում կան՝ «վասն սաղմոսի ժամատեղաց» խրատ և կանոններ և «Հաւատով խոստովանիմ» աղօթքը:

դ. Երեք թերթ մազադատեայ պահպանակի գրուած երկաթագրով, պարունակում է հատուածներ ն. Կտակարանից:

է. Պատմութիւն Մովսիսի Կադանկասացոյ, «Օրինակեալ ի ձեռն Մկրտիչ արքեպիսկոպոսի Բաբամեանց երեսնցւոյ միաբանի Ս. Էջմիածնի՝ յաւուրս սարկաւազութեան իւրոյ յամի Տեառն 1839 ի Դավրէժ»:

Ձեռագիրը գրուած է շղագրով, կապոյտ թղթի վրայ և է «Օրինակեալ բաղատառութեամբ ընդ դադափարին որ ի գրանոցի Աթոռոյն Էջմիածնի»:

դ. Պատմութիւն Յովնանու Դրախսանկեցցոյ, օրինակած նոյն Բաբամեան սարկաւազի ձեռքով Դավրէժում 1839 թուին:

է. Ուղեցոյց Քրիստոնեական Ուղղափառ Վարդապետութեան, 1861 Գրքոյկիս յառաջարանը ունի ստորագրութիւն հեղինակի՝ «Մատթէոս կաթողիկոս ամենայն Հայոց»:

Մեծագ Վարդապետ

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Յայտնի է, որ Երուսաղէմի վանքի աւագ լուսարարապետի պաշտօնը՝ կարեւորագոյններից մէկն է, որովհետեւ բացարձակապէս նրան է յանձնարարուած ոչ միայն եկեղեցու միջի պաշտօնավարութեան և տօնակատարութեան կարգադրութիւնը, այլ նաեւ ս. Յակոբոյ վանքի մասանց խորանի բանալին տօնաց որևէ հաշիւ տալու կամ ստանալու: Նա ընտրուած է ընդհանուր միաբանութեան կողմից և իւր պաշտօնը վարում է ցմահ, եթէ ինքը կամովին չէ հեռանում — Կիլիկիոյ ներկայ կաթողիկոսը մինչև իւր ընտրութիւնը յաթոռ Տանն Կիլիկիոյ աւագ լուսարարապետ էր —, եկեղեցու խորանի բանալին անձամբ վերցնում է «Գլխադրի» վրայից, որտեղ պահուած է նախկին լուսարարապետի մահուանից կամ հեռանալուց յետոյ և բանալով